

Գիւղիս հայերը շատ ուժեղ ստամոքս ունին. անոնց իւրաքանչիւրն ոչխար մը կարող է ուտել եթէ ուրիշի մը տունը ճաշի հրավերուի: Համեղ կերակուրներէն աւելի կախորժին քան թէ խօսարաններէն եւ լսարաններէն:

Պօյեաճի գիւղցին շատ կսիրէ իւր անունը փոխել: Կարապետը *Քարլօ* եւ Մկրտիչը *Պաթիսթ* կ'ըլլան հոն: Շաբաթ մը ետքը նորէն կ'փոխուին անոնք եւ *Շան* կամ *Բօլ* կ'ըլլան, եւ մարդս կստիպուի ամեն շաբթու առաջին օրն իւր բարեկամն հարցունել:

–Այսօրուան անունդ ի՞նչ է:

–*Տօզէֆ*: Քուկի՞նդ:

–*Մարթէն*:

Զուարճութիւնը շատ կսիրեն, ամիս մը շարունակ կրնան ուտել, խմել եւ երգել, առանց ամենափոքր անհանգստութեան մը զգալու:

Հոս սա աղէկութիւնը կայ, որ իրարու միս չեն ուտեր եւ իրարու հետ շատ սիրով են: Եթէ երբեմն պատահի իրարու հետ վեճի բռնուիլ՝ քառորդէ մը կհաշտուին եւ դրսէն բնաւ միջամտութիւն չեն ընդունիր, իրենց անկախութիւնը պաշտպանելու համար: Ասոնք ընդհանրապէս այնչափ իրարու քիթ մտնելով կխօսակցին, որ հեռուանց տեսնողն կկարծէ, թէ իրենց խօսակցութիւնը քրթի վրայ է:

Կիներէն ոմանք թէպէտ եւ իրենց անունները չեն փոխեր, բայց այնչափ կ'փոխեն կերպարանքն, որ ցերեկին չես ճանաչեր այն կինն, զոր առաւօտուն տեսած ես, ոչ ալ երեկոյին կճանաչես այն աղջիկն, զոր ցերեկին տեսած ես: Միօրինակութիւնն այս գիւղին մէջ շատ ձանձրութիւն կպատճառէ, եւ մենք կգարմանանք, որ Պօյաճի գիւղցին ի՞նչպէս կը համբերէ եւ շաբաթը անգամ մը տուն չփոխեր: Խնդրենք Աստուծմէ, որ այս մոլութիւնն թաղականներուն եւ վարժարանը կառավարող անձերուն վրայ չգործադրուի:

Իգական սեռն շատ կսիրէ ճաշակով հագուիլը եւ ճաշակով բամբասելը:

Ամառուան եղանակին մէջ շատ տեղերէ կու գան հոս օդափոխութեան համար: Ժամանակաւ ուխտի կ'երթային, հիմա միայն օդափոխութեան կ'երթան:

Գիւղիս հայ տուններուն թիւը ճիշտ չգիտցուիր, բայց վաթսունի եւ եօթանասունի մէջ տեղը կկարծուի: